

ՀԱՍԿԱՆԱԼՈՎ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Աննա Պետրոսյան
մ.գ.թ., դոցենտ, ՄՄՀ
Արցախ

Անոտացիա: Հողվածում ներկայացված են հասկանալով կարդալու կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված հնարներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր՝ զիտատեխնիկական առաջընթացի ժամանակաշրջանում մարդիկ կորցրել են սերն ու հետաքրքրությունը ընթերցանության հանդեպ, փորձել ենք հողվածում մեծ տեղ տալ մանավանդ հասկանալով կարդալու հիմնախնդրին: Հասկանալով կարդալու կարողություններն ու հմտությունները ձևավորվում և զարգանում են դպրոցում: Մենք գտնում ենք, որ գոյություն ունի ընթերցանության երեք տարրեր եղանակ:

I. կառուցվածքային կամ վերլուծական, II. վերաներկայացման կամ սինթետիկ, III. քննադատական կամ գնահատող:

Բանալի բառեր՝ հասկանալով կարդալ, կարդալու որակական հատկանիշներ, երեք ընթերցում, կառուցվածքային մասեր, վերլուծական, համադրական, քննադատական, գրքի հիմնական իմաստ, ընդլայնված ընթերցանություն, սահմանափակ ընթերցանություն:

10 հետաքրքիր փաստ ընթերցանության մասին

1. Մաքսիմ Գորկին մեկ րոպեում կարդում էր 400 բառ:
2. Արագ ընթերցանության դեպքում աչքերը ավելի քիչ են հոգնում, քան դանդաղ ընթերցանության դեպքում:
3. Ի. Ստալինը օրական կարդում էր 400 էջ՝ համարելով դա նվազագույն նորմա:
4. Թումաս Էդիսոնը կարդում էր 2-3 տողը միանգամից, շնորհիվ առավելագույն կենտրոնացման՝ մտապահում էր էջերով տեքստեր:
5. Ավանդական ընթերցանության դեպքում ընկալման մակարդակը 60 տոկոս է, արագ ընթերցանության դեպքում՝ 80 տոկոս:
6. Բալգակը 200 էջանց վեպը կարդում էր 30 րոպեում:
7. Ընթերցանության ժամանակ ընթերցողի աչքերը, նայելով տարբեր տառերին, հաղորդում են տարբեր պատկերներ: Խսկ ուղեղը դրանք միավորում է մեկ պատկերում:
8. Ումն է. Գառնը բառացիորեն հիշում էր իր ընթերցած 2500 գրքերը:
9. Նապոլեոնը մեկ րոպեում կարդում էր 2000 բառ:
10. Ընթերցանության միջին կարողությամբ մարդու աչքերը մեկ գրքային տողի վրա դադար է վերցնում 12-16 անգամ, արագ կարդացողի աչքերը՝ 2-4 անգամ [10, էջ 117]:

Կարդալու որակական հատկանիշները մի քանիսն են, որոնք իրար հետ սերտորեն կապված են ու փոխադարձաբար պայմանավորված: Հենց այդ հատկություններվ էլ բնութագրվում է լավ կարդալը:

Կարդալու որակական հատկանիշներն են՝

- **Ճիշտ կամ անսխալ կարդալ,**
- **Վարժ կամ սահուն կարդալ,**
- **հասկանալով կամ զիտակցելով կարդալ,**
- **արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,**
- **արագ կարդալ [1, էջ 116]:**

ա) **Ճիշտ կարդալ**

«Առաջարկված բնագիրը ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտն ընթերցելիս բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բարդ մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի ու տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի քերականական ձևը (այսինքն՝ գոյականի հոլովը, թիվը, բայի դեմքն ու թիվը, ժամանակը), երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ կարդալիս նախադատության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ

բարի մեջ վանկերը և նախադասությունների մեջ բառերը ավելորդ անգամ չի կրկնում, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան»: [1, էջ 116]

բ) Սահուն կարդալ

Առաջարկված բնագիրը «սահուն կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց ընդհատելու, հնարավոր չափով արագ ու սահուն ընթերցումը, ընդ որում, կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանը, ենթատեսայի կոահմանը (ինչպես կարդացողի, այնպես էլ ունկնդիրների կողմից)» [1, էջ 119]:

զ) Հասկանալով կարդալ

Հասկանալով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել, պահպանել մտքի հաջորդականությունը և տրամարանական կապը, վերլուծել կարդացածը: Վերլուծելը թերևս այն կարենոր և բարդ կարողություններից մեկն է, որը փորձում են ձևավորել տարրական դպրոցում: **Հասկանալով կարդալու կարողության մշակումը ընթերցանության գերինդիրն է** Կարդացածը հասկանալ նշանակում է տեքստի մտքերը ներիջուսել տվյալ թեմայի վերաբերյալ իր իմացությանը, հաղորդվող տեղեկությունը կիրառել գործնականում, ինչպես նաև կարդացածին սեփական մեկնաբանությունը տալ: Կարդալու ուսուցումը սկսվում է տարրական դպրոցից, որն ուսուցման հետագա օգակներում դառնում է միջոց: Կարդալու և կարդացածը հասկանալու կարողության մշակումը բարդ և աշխատատար գործ է և բավական ճիգ ու ջանք է պահանջում: Ցանկացած ընթերցանություն նպաստակային է և գիտակցական, երբ ընթերցանության ժամանակ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է կարդալու, ձգուում են հասկանալ, թե ինչի մասին է խոսք գնալու: Կարդալու ընթացքում, երբ ընթերցողն անընդհատ ընթերցում է նյութը, այդ ճանապարհով նա ստուգում է իր վարկածը, փորձում է իմաստավորել հասկանալ իր ստացած տեղեկատվությունը: Արդյունքում ընթեցնող ոչ թե պասիվորեն ընկալում է այն, ինչ կարդում է, այլ նա իր վրա է վերցնում կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը [1, էջ 119]:

դ) Արտահայտիչ կարդալ

Կարդալը արտահայտիչ է համարվում, այն ժամանակ միայն, երբ կարդացողը կարողանում է մտովի զգալ և իր ձայնի եկաներով, դադարներով ու փոփոխությամբ վերակենդանացնել այն ապրումներն ու հովզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ: Կարդալն արտահայտիչ է, եթե կարդացողը կարողանում է վերակենդանացնել գրական հայերենի արտասանության ճշտությունը, հստակությունն ու բարձրությունը, խոսքի քերականական, տրամարանական ու հոգեբանական շեշտերն ու դադարները, ճիշտ է ընտրում կարդալու տեմպն ու հնչերանգը:

Արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է ընկած լինի հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը և կարդալու գիտակցականությունը [7, էջ 119]:

ե) Արագ կարդալ

Կարդալու որակական այս հատկանիշը՝ որպես ժամանակի հետ կապված կենսական պահանջ, նոր է ձևավորվել: Արագ կարդալու միջոցով կարձ ժամանակամիջոցում շատ տեղեկատվություն կարելի է ստանալ [7, էջ 119]:

Հոգեբանների կարծիքով հասկանալով կարդալու համար ընթերցողը առաջին հերթին պետք է կարդա արագ: Արագ կարդալը հասկանալով կարդալու կարողությունների զարգացմանը նպաստող ամենակարևոր գործոններից է: Խոսքը լավ կարդալու մասին է, այսինքն՝ կարդալ խոսելու տեմպին համահունչ: Այդ հանգամանքը նրանք մեկնաբանում են որոշ տեսանկյուններից:

Ուսուցման տեսանկյունից: Եթե աշակերտը կարդանում է արագ կարդալ, իսկ միջին օլակում տնային հանձնարարությունները 5-8 էջ են կամ 6500 բառ, ապա $6500 : 60 = 107$ բոպե: Մոտ 2 ժամ անհրաժեշտ է, որպեսզի նյութը կարդա գոնե մեկ անգամ: Իսկ չէ՞ որ պետք է այն կարդա 2-3 անգամ և պետք է կատարի այլ տնային հանձնարարություններ:

Զարգացման տեսանկյունից: Արագ կարդում են այն մարդիկ, որոնք շատ են կարդում: Գործնթացում զարգանում է գործնական հիշողությունը և ուշադրության կայունությունը: Այս երկու ցուցիչներից է կախված նաև ընթերցողի մտավոր աշխատունակությունը:

Դաստիարակության տեսանկյունից: Անառարկելի է, որ ընթերցողների դաստիարակությունը պայմանավորված է նրանց պարտավորություններից և զգայունակությունից: Եթե երեխան նախորդ

դասարանում լավ չի սովորում, հաջորդ դասարանում ցածր է լինում նրա առաջադիմությունը: Փորձը ցոյց է տվել, որ դասարանի սովորողների մեծամասնության մոտ միջակություն է տիրում: Նրանց համոզմամբ՝ սովորեն, չսովորեն՝ միջակություն կլինի: Ուրեմն՝ գերադասելի է չսովորելը: Եվ նման երեխաները բարձր դասարաններում չեն կարողանում ինքնուրույն տնային հանձնարարություններ կատարել:

Տևողական տեսանկյունից: Առաջին հայացքից թվում է, թե այն շատ հեռու է կրթական համակարգից: ԱՄՆ-ի շատ ձեռնարկություններում կառավարական աշխատանքի չեն ընդունում այն անձանց, ովքեր մեկ րոպեում չեն կարդում 400 բառ: Համարվում է, որ նա «կիսորտակվիթղթերի մեջ»:

Գաղափարա-քաղաքական տեսանկյունից: Եթե 6 թերթից բաղկացած թերթում կա մոտ 40000 բառ և կարդացողն էլ կարդում է րոպեում 80 բառ, այն կարդալու համար անհրաժեշտ է 500 րոպե, կամ մոտ 8 ժամ:

Թվում է՝ անզրագիտություն չկա, սակայն կիսազրագիտությունն էլ ոչ մի բանով լավ չէ:

Ինչո՞ւ են երեխաները սկսել վատ կարդալ:

Մեր՝ գիտատեխնիկական առաջնորդացի ժամանակաշրջանում, որտեղ թագավորում են հեռուստատեսությունը, համակարգիչները և տեսախաղերը, երեխաները կորցրել են հետաքրքրությունը ընթերցանության հանդեպ: Սակայն ոչ միայն երեխաները, այլ նաև մեծահասակները չեն ուզում կարդալ:

Գիրքը հասկանալով կարդալու համար անհրաժեշտ է ընթերցել ամենաքիչը երեք անգամ, եթե գիրքն ունի հատուկ ուշադրության կարիք: Երեք անգամ ասելով՝ նկատի ունենք, որ գոյություն ունի գիրք կարդալու երեք եղանակ, որոնք պետք է անպայման կիրառել: Գործողությունների միասնական համակարգ մշակելու համար պետք է փորձ ձեռք բերել, ինչը կօգնի բազմաթիվ քայլերի միավորումը կատարել գործողությունների առանձնացված համակարգով: Սկզբնական շրջանում դժվար կլինի միավորել գործունեության տարբեր հայեցակետերը, ինչպես խճանկարի տարբեր հատվածները մեկ ամբողջության մեջ: Նրանցից յուրաքանչյուրը պահանջում է բացարիկ ուշադրություն և ջանք:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել որոշակի կանոնների վրա, որոնք բաժանվում են երեք հիմնական խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը համապատասխանում է գրքեր կարդալու եղանակներից մեկին: **Ինչո՞ւ է անհրաժեշտ երեք ընթերցում:** Առաջին հերթին պետք է յուրացնել այն, ինչը ներկայացվում է որպես գիտելիք: Հետո պետք է որոշել՝ ընդունելի է այդ գիտելիքը: Այլ խոսքերով՝ **առաջին խնդիրն այն է**, որ հասկանանք գիրքը, իսկ **երկրորդը՝** որ նրան մոտենանք ըննադատորեն: Հետազոտում կհասկանանք, որ դրանք ըստ էության տարբերվում են: Իմացության գործընթացը նույնպես կարելի է բաժանել մասերի: Գիրքը հասկանալու համար պետք է ընդունել այն որպես մեկ կառուցվածքային ամբողջություն, իսկ հետո՝ լեզվական և իմաստային միավորների համակարգով

օժտված մի օբյեկտ:

Այսպես՝ գոյություն ունի ընթերցանության երեք տարբեր եղանակ.

I. Կառուցվածքային կամ վերլուծական եղանակ: Այս դեպքում ընթերցողը շարժվում է ամբողջից դեպի մասնավոր:

II. Վերաներկայացման կամ համադրական եղանակ: Այստեղ ընթերցողը շարժվում է մասնավորից դեպի ամբողջը:

III. Քննադատական կամ գնահատող եղանակ: Կարդացողը գնահատում է հեղինակին և որոշում համաձայն է ինքը նրա տեսակետին:

Այս երեք եղանակներից ամեն մեկը ենթարկում է մի քանի գործողությունների կատարում, իսկ դա նշանակում է հաշվի առնել մի քանի կանոններ:

Թե՛ գեղարվեստական, թե՛ գիտական տեքստերը առաջին եղանակով կարդալու համար պետք է իմանալ՝

1) **Ի՞նչ քննագավառի գիրք եք կարդում, այսինքն՝ գրքի ուսումնասիրման հիմնական առարկան:**

2) **Ո՞րն է գրքի հիմնական իմաստը**

3) **Ի՞նչ իմաստային կամ կառուցվածքային մասերի է այն բաժանվում :**

4) **Ի՞նչ հիմնական խնդիրներ է հեղինակը փորձում լրացնել**

Այս եղանակը իր մեջ պարունակում է չորս գործողություն և չորս կանոն:

Երկրորդ եղանակով ընթերցման կանոններն են՝

1)Գտնել և ներկայացնել ամենակարևոր խոսքերը գրքում:

2) Գտնել և ներկայացնել ամենակարևոր նախադասությունները գրքում:

3)Համարժեք ձևով գտնել ամենակարևոր դրվագները, որոնք գրքի հիմնական դրույթներն են պարունակում:

4) Ի՞նչ խնդիրներ է դրել իր առջև հեղինակը այս գրքում, և ո՞ր խնդիրները նրան չի հաջողվել լուծել:

Օրինակ՝ տրված է հետևյալ տեքստը.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կյանքի արագընթաց փոփոխությունների, տեղեկատվության ծավալի բազմապատկման, կրթության նկատմամբ հասարակության պահանջկուտության մեծացման, հակակրթական գործոնների և միջավայրի ուժեղացման պայմաններում «ի±նչ սովորեցնել» հարցը խստ հրատապ է դարձել: Ավանդաբար եենց այս հարցին է փորձում պատասխանել կրթության բովանդակությունը:

Կրթության բովանդակության մի քանի մակարդակ կա՝ մշակված բովանդակություն (չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր), հաղորդվող բովանդակություն (ուսումնական գործընթաց), յուրացվող բովանդակություն (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արժեքներ...): Սովորաբար ուսուցչին է վերապահվում երկրորդ մակարդակի իրականացումը և երրորդ մակարդակի պատասխանատվությունը: Ուսուցիչը նվազ մասնակցություն ունի կրթության բովանդակության մշակմանը: Համարվում է, որ այս խնդիրն առավելապես կրթության բովանդակային քաղաքականությունը մշակողների, ծրագրերի, դասագրքերի հեղինակների գործառույթն է: «Մեկ առարկա-մեկ դասագիրք սխեմայում ուսուցիչ դերը շատ կարևորական է:

Ներկայումս իրավիճակը փոխվում է: Պետությունը իր հիմնական գործառույթն է համարում բովանդակության ընդհանուր պահանջների և սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների՝ չափորոշիչների սահմանումը: Այդ մոտեցման վրա է հիմնված Հայաստանի հանրակրթության պետական կրթակարգը: Բովանդակային նոր քաղաքականությամբ նախանշվում է, որ լինելու են այլընտրանքային ծրագրեր, դասագրքեր: Ենթադրվում է, որ նման խայտարդեսության պայմաններում ուսուցչից մեծ ջանքեր են պահանջվում բովանդակային նյութը դասարանին հարմարեցնելու և արդյունավետ կիրառելու համար: Այսպիսով, բովանդակության բոլոր մակարդակներում ժամանակակից ուսուցչից գործուն մասնակցություն է պահանջվում վճռորոշ դեր ունենալով հաղորդվող բովանդակության գործում ուսուցչից պետք է փորձի բովանդակության մյուս երկու մակարդակները միմյանց համապատասխաննեցնելու խնդիրը լուծել: Իսկ այդ խնդիրը որոշ չափով դժվարանում է, քանի որ, եթե նախկինում մշակված բովանդակությունը առարկայական ծրագրերն ու դասագրքերն էին, ապա այսօր դրանց ավելանում են չափորոշիչները: Այսինքն, ուսուցչի առջև խնդիր է դրվում ոչ թե սույն դասագրքի նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որ արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխան լինի չափորոշիչներին: Օրինակ, պատմության ուսուցչից պետք է մտածի ոչ միայն Հայաստանի, Հունաստանի, Հռոմի, Գերմանիայի պատմության թեմաները անցնելու մասին, այլև աշակերտների պատրաստվածության մակարդակը պատմության համար սահմանված չափորոշիչներին համապատասխաննեցնելու մասին [10, էջ 13]:

Առաջին եղանակով /Վերլուծական / կարդալու համար պետք է իմանալ, որ

1) Տեքստի ուսումնասիրման հիմնական առարկան կրթության բովանդակության մշակված, հաղորդվող, յուրացվող մակարդակն է:

2) Գրքի հիմնական իմաստը ուսուցչի առջև խնդիր է դրվում ոչ թե սույն դասագրքի նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որ արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխան լինի չափորոշիչներին:

3) Ի՞նչ խմաստային կամ կառուցվածքային մասերի է այն բաժանվում :

1. «Ի՞նչ սովորեցնել» հարցը խստ հրատապ է դարձել: Ավանդաբար, հեենց այս հարցին է փորձում պատասխանել կրթության բովանդակությունը:

2. Կրթության բովանդակության մի քանի մակարդակ կա՝ մշակված բովանդակություն (չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր), հաղորդվող բովանդակություն (ուսումնական գործընթաց), յուրացվող բովանդակություն (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արժեքներ...):

3. Բովանդակային նոր քաղաքականությամբ նախանշվում է, որ լինելու են այլընտրանքային ծրագրեր, դասագրքեր:

4. Եթե նախկինում մշակված բովանդակությունը առարկայական ծրագրերն ու դասագրքերն էին, ապա այսօր դրանց ավելանում են չափորոշիչները:

4)Ի՞նչ հիմնական խնդիրներ է հեղինակը փորձում լուծել

1. Բացահայտել, թե որն է կրթության բովանդակությունը:
2. Ուսումնասիրել կրթության բովանդակության մակարդակները:
3. Ուսումնասիրել կրթության բովանդակային նոր քաղաքականության նախանշումը և կանխատեսել դրա իրականացմանը միտված դիրքորոշումները:
4. Կրթական առարկայական չափորոշիչների դերը գնահատելու համար կանխատեսել որոշակի դիտարկումներ:

Երկրորդ եղանակով ընթերցման կանոններն են՝

1)Գտնել և ներկայացնել ամենակարևոր խոսքերը գրքում /համադրական/:

1. «Ի՞նչ սովորեցնելի հարցը խիստ հրատապ է դարձել: Ավանդաբար հենց այս հարցին է փորձում պատասխանել կրթության բովանդակությունը:
2. Կրթության բովանդակության մի քանի մակարդակ կա՝ մշակված բովանդակություն (չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր), հաղորդվող բովանդակություն (ուսումնական գործընթաց), յուրացվող բովանդակություն (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արժեքներ...):
3. Բովանդակային նոր քաղաքականությամբ նախանշվում է, որ լինելու են այլընտրանքային ծրագրեր, դասագրքեր:

4. Եթե նախկինում մշակված բովանդակությունը առարկայական ծրագրերն ու դասագրքերն էին, ապա այսօր դրանց ավելանում են չափորոշիչները:

2)Գտնել և ներկայացնել ամենակարևոր նախադասությունները գրքում:

1. «Ի՞նչ սովորեցնելի հարցին է փորձում պատասխանել կրթության բովանդակությունը:
2. Կրթության բովանդակության մի քանի մակարդակ կա:
3. Ներկայում իրավիճակը փոխվում է:
4. Բովանդակային նոր քաղաքականությամբ նախանշվում է, որ լինելու են այլընտրանքային ծրագրեր, դասագրքեր:
5. Բովանդակության բոլոր մակարդակներում ժամանակակից ուսուցչից գործուն մասնակցություն է պահանջվում:

6. Ուսուցիչ առջև խնդիր է դրվում ոչ թե սուկ դասագրքի նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որ արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխան լինի չափորոշիչներին:

3)Համարժեք ձևով գտնել ամենակարևոր դրվագները, որոնք գրքի հիմնական դրույթներն են պարունակում:

1. Կյանքի արագընթաց փոփոխությունների, տեղեկատվության ծավալի բազմապատկման, կրթության նկատմամբ հասարակության պահանջնության մեծացման, հակակրթական գործոնների և միջավայրի ուժեղացման պայմաններում. «Ի՞նչ սովորեցնելի հարցը խիստ հրատապ է դարձել:

2. Ուսուցիչը նվազ մասնակցություն ունի կրթության բովանդակության մշակմանը:

3. Դեսությունը իր հիմնական գործառույթն է համարում բովանդակության ընդհանուր պահանջների և սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների՝ չափորոշիչների սահմանումը:

4. Բովանդակության բոլոր մակարդակներում ժամանակակից ուսուցչից գործուն մասնակցություն է պահանջվում:

4)Ի՞նչ խնդիրներ է դրել իր առջև հեղինակը այս գրքում, և ո՞ր խնդիրները նրան չի հաջողվել լուծել:

1. Բացահայտել է՝ որն է կրթության բովանդակությունը:

2. Ուսումնասիրել է կրթության բովանդակության մակարդակները:

3. Ուսումնասիրել է կրթության բովանդակային նոր քաղաքականության նախանշումը և կանխատեսել դրա իրականացմանը միտված դիրքորոշումները:

4. Կրթական առարկայական չափորոշիչների դերը գնահատելու համար կանխատեսել է որոշակի դիտարկումներ:

Առաջին եղանակով կարդալու դեպքում սկզբում պետք է որոշել այն խնդիրը կամ խնդիրները, որոնք փորձում է հեղինակը լուծել: Երկրորդ եղանակի վերջին քայլում պետք է հասկանալ՝ հեղինակը արդյո՞ք լուծել է իր առջև դրված խնդիրները և հատկապես ո՞ր հարցերին է պատասխաններ տվել: Տեսնում ենք, որ այս եղանակները փոխկապակցված են և վերջնական փուլում միավորվում են: Հմուտ ընթերցանության զարգացմանը համընթաց կտվորենք կարդալ միաժամանակ երկու եղանակներով: Որքան լավ դա ստացվի, այդքան ավելի շատ մի եղանակը կհամագրծակցի մյուսի հետ: Բայց երրորդ եղանակը երբեք չի կարող ուղեկցել մյուս երկուսին: Նույնիսկ ամենահմուտ ընթերցողը պետք է առաջին երկու եղանակները առանձնացնի երրորդից: Հեղինակի դիրքորոշման հասկացումը միշտ պետք է նախորդի տեքստի քննադատությանը կամ գնահատմանը:

Կան «ընթերցողներ», որոնք սկսել են երրորդ եղանակից, երբեմն ընդհանրապես անտեսում են առաջին և երկրորդ եղանակները: Նրանք իրենց ձեռքն են վերցնում գիրքը և շուտով արդեն համոզված պատմում են, այնտեղ ինչ այն չէ: Զազիվ թե այդ մարդկանց կարելի է անվանել ընթերցող: Ավելի ճիշտ է նրանց դասել այն մարդկանց շարքին, ովքեր գրքի շուրջ խոսակցությունը օգտագործում են որպես առիթ ինքնահաստատման և մենախոսության համար: Այդպիսի մարդկանց հետ իմաստ չունի խոսել, լսել նրանց նույնպես իմաստ չունի [10]:

Ընթերցման առաջին երկու եղանակները կարող են համատեղվել, քանի որ ուղղված են գրքի ըմբռնմանը: Երրորդը առանձնանում է նրանով, որ առաջարկում է քննադատություն այդ ըմբռնումից հետո: Այսպիսով, երկու եղանակների միավորումը ընթերցողին տալիս է հնարավորություն ուղղորդել և անջատել դրանք ցանկացած պահի, որը շատ կարևոր է: Չեր ընթերցման եղանակը դուք կարող եք ստուգել՝ ամբողջ գործընթացը բաժանելով մասերի: Հնարավոր է ձեզ անհրաժեշտ է վերանայել այն քայլ առ քայլ, չնայած այդ ժամանակ այն կը նույնականացնի որպես միասնական ամբողջություն, քանի որ ընթերցման գործընթացը կդառնա սովորական գրադարձումը:

Դրա հետ կապված պետք է իիշել, որ տարբեր կանոններ ընդմիշտ մնում են ինքնավար, նույնիսկ այն ժամանակ երբ ձեր գիտակցության մեջ նրանց սահմանները ջնջվում են՝ ազմելով միասնական մի բարդ հմտություն: Եթե դուք չեք կարող դիմել այդ կանոններին առանձին –առանձին, դա կարող է ամբողջությամբ խանգարել ընթերցման գործընթացին:

Գիրքը երեք եղանակներով կարողանալ կարդալ բավարար չէ. կարևոր է սովորել միաժամանակ կարդալ մի քանի իրար հետ իմաստով փոխկապակցված գրքեր, որպեսզի որակյալ ճշգրտությամբ յուրացվեն նրանցից ցանկացածը:

Խոսքը գնում է միայն իմաստով փոխկապակցված կամ նույն խնդիրներին վերաբերող գրքերին: Եթե չկարողանանք «փոխկապակցված» կարդալ այդ գրքերը, ապա, հավանաբար, չենք կարող, ինչպես հարկն է, յուրացնել դրանցից և ոչ մեկը:

Սահմանափակ անվանվում են գրքի այն ընթերցումը որը որևէ կապ չունի ուրիշ աղբյուրների հետ[10]:

Ընդլայնված ընթերցանությունը՝ գրքի ուսումնասիրումն է իմաստով իրար փոխկապակցված այլ գրքերի ենթատեքստում: Երբեմն դա միայն տեղեկատու գրականություն է, օրինակ՝ բառարաններ, հանրագիտարաններ, այսինքն օգտակար մեկնաբանություններ[10]:

Միակ բանը, որ պետք է որոշել, ընթերցման հաջորդականությունն է՝ պատմական կապը ընթերցվող հատվածի և շաբաթված որոշակի օրվա միջև:

Մեր առաջարկած ընթերցման կանոններում կա ևս մի սահմանափակում. մեզ հետաքրքրում է ընթերցման նպատակներից միայն մեկը, այն է՝ ընթերցանություն հանուն ուսուցման, այլ ոչ թե ընթերցանություն զվարձանքի համար: Այդ նպատակը հավասարապես վերաբերում է և՛ հեղինակին, և՛ ընթերցողին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Գյուլամիրյան Զ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2006, 328 էջ:
- Գյուլամիրյան Զ. Հ., Խոսքի զարգացում. Եր., 2004, 288 էջ:
- Ա. Գյուլբուլալյան և ուրիշներ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ, 200.
- Հայոց լեզու և գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: Եր., 2006, 148 էջ:

5. Մորտիմեր Աղլեր, Ինչպես ընթերցել գիրքը, Գլուխ 7. <https://gradaranblog.wordpress.com/>
6. Մկրտչյան Գ., Դասավանդման գործընթացի կառավարումն ու վերահսկողությունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ. Եր., 2005, 190 էջ:
7. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների մոդուլային ուսումնական ձեռնարկ, Եր., 2008, 316 էջ:
8. Պետրովսկի Ա. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն. Եր., 1977, 398 էջ:
9. Տեր-Գրիգորյան Ս. Ե. Հայոց լեզվի մեթոդիկա տարրական դասարաններում, Եր., 1980, 564 էջ:
- 10.Տեղեկագիր ՀՀ կրթության և գիտության նախարարության, հ. 6, 2007.
- 11.<https://mediamag.am>

РЕЗЮМЕ
Развитие навыков осмысленного чтения
Анна Петросян

Ключевые слова: осмысленное чтение, три разных способа чтения, структурный, аналитический, синтетический, критический, основной смысл книги, качественные признаки чтения расширенное чтение, граничное чтение.

В статье представлены приемы, способствующие формированию и развитию умений и навыков осмысленного чтения. Принимая во внимание то обстоятельство, что в эпоху научно-технического прогресса люди потеряли любовь и интерес к чтению, в статье мы попытались уделить особенное внимание проблемам смыслового чтения. Умение и навыки осмысленного чтения формируются и развиваются в школе. Мы считаем, что существует три разных способа чтения: I способ - структурный или аналитический, II способ – синтетический, III способ – критический или оценочный.

SUMMARY
Developing Reading Skills for Understanding
Anna Petrosyan

Keywords: reading with understanding, the qualitative features of reading, three readings, structural parts, analytic, synthetic, critical, the main plot of the book, enlarged reading, limited reading.

The article presents the means of developing and formation of reading skills and abilities for understanding. Considering the fact that current progressive period of science and technology promoted lack of children's love and interest towards reading, we have assessed the problem of reading for understanding. Reading skills and abilities for understanding are formed and developed at school. We have found out that there are three different ways of reading:

1. structural or analytic
2. representative or synthetic
3. critical or evaluative